

# ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **ازتاک** جريدة يومية سياسية وأدبية - الثورة السورية، إنشاء 2002

1500 L.Ո. 75Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ 17 (21067) ԵՐԵՎԱՆԻ, 26 ՄԱՐՏ 2002 10ԷՁ

## ՊԵՐՐԻ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԵ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱԻՄ ԸՋ

Խորհրդարանի նախագահ Նեպոլիտան Պերրի երեկ զգուշացուց պաղեստինցի գաղթականները Լիբանանի մէջ բնակեցնելու համար նիւթուղ միջազգային դաւէ մը: Ան յոյս յայտնեց, որ արաբական վեհաժողովը կտրուկ եւ անգիջող կեցուածքով մը կը մերժէ բնակեցումը:

Խորհրդարանին մէջ տրուած իր մամուլային ասուլիսին ընթացքին Պերրի ներկայացուց Խորհրդարաններու Միջազգային Միութեան Մարտի համագործակցութեան արդիւնքներն ու անոր մասնակցած իրանական պատուիրակութեան արած աշխատանքները:

Պերրի վերահաստատեց, որ ոչ մէկ կողմ իրաւունք ունի պաղեստինցի գաղթականներու տունդարձ իրաւունքին գծով զինուորներ ընելու: «Լիբանան եւ արաբները ՄԱԿի թիւ 194 որոշումի որդեգրումին ատեն համաձայն չէին անոր, պարզապէս որովհետեւ երկրորդ ընտրանք մը կը նախատեսէր տունդարձ կամ հատուցում ստանալ, իսկ մենք կը մերժէինք հատուցում ստանալու ընտրանքը», յիշեցուց Պերրի:

Խորհրդարանի նախագահը նաեւ խօսեցաւ պաղեստինեկարայէլեան հակամարտութեան վերաբերեալ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի վերջերս որդեգրած թիւ 1397 որոշումին մասին, զիտեղ տալով, որ պաղեստինեան դատը ոչ մէկ ատեն միայն պաղեստինցիներուն դատը եղած է, այլ՝ համարարական, իսկ գաղթականներու տունդարձի հարցը կենսական նշանակութիւն ունի Լիբանանի համար եւ սահմանադրական տրամադրութիւն է:

Շարք՝ էջ 10

## ԿԸ ՄԵՐԺԵՆԵ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ

Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՅՈՒՏ

Նախագահ գործիչ Լահուտ երէկ զիտեղ տուաւ, որ Լիբանանէն իսրայէլեան ուժերու նուաստացուցիչ հեռացումէն երկու տարի ետք Պէյրութի մէջ արաբական վեհաժողովի գումարումը ինքնին պատմական իրաւունքները պիտի ձգէ արաբները: Վերջինս հակամարտութեան պատմութեան վրայ:

Նախագահ Լահուտ վե-

րահաստատեց, որ Լիբանան հաստատ կը մնայ պաղեստինցի գաղթականներու տունդարձի պահանջին վրայ, եւ ՄԱԿի թիւ 194 որոշումով նուիրապետութեան համար իրաւունքներն եւ այլ միջազգային որոշումներու գործադրութեան համար անհրաժեշտ է ճշուումը արաբներու իսրայէլի վրայ:

«Լիբանանի մէջ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը պիտի ըլլայ

անիրաւութեան յաղթանակը արդարութեան վրայ, եւ ուժի յաղթանակը՝ միջազգային օրէնքին վրայ, եւ եթէ նման բան պատահի, ապա անիկա հիմք պիտի հանդիսանայ աշխարհի տարածքին արդար իրաւունքներն եւ օրէնքներն սեղ ուժի տրամաբանութեան զերացասումին», զգուշացուց ան:

Շարք՝ էջ 10

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՀՐԱՍԱՅԼԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԳԱՂԹԱԿԱՅԱՆ ՄԸ ՆԵՐԽՈՒԺԵՑԻՆ

Պաղեստինցի մը սպանուեցաւ եւ երկու ուրիշներ վիրաւորուեցան, երբ իսրայէլեան բանակի իրասայելներն ու վրահաստատ պոլիտոպրներ պաղեստինեան գաղթականներու մը ներխուժեցին Կապալի հարաւային շրջանին մէջ:

Պաղեստինցի ակաւատներ յայտնեցին, որ պոլիտոպրները շէնքեր կը քանդէին «Պրապիլ» գաղթականային մէջ, որ սահմանակից է Եգիպտոսի: Պաղեստինեան ապահովութեան ուժեր յայտնեցին, որ փնտրելու իրակ բացած են իսրայէլեան ուժերուն վրայ՝ Կանոնք հեռացնելու համար

գաղթականներն: Իսրայէլեան բանակի աղբիւրները հաղորդեցին, որ ներխուժումը կատարուած է, որովհետեւ «Պրապիլ» եւ «Ռաֆա» գաղթականներու բնակիչները թափուած են յարձակումներուն՝ սահմանագիծին վրայ հսկող իսրայէլցի փնտրներուն դէմ:

Պաղեստինցիներուն եւ իսրայէլցիներուն միջեւ բախումներ արձանագրուած էին նաեւ Կիրակի օր: Իսրայէլեան ուժեր սպանուեցին չորս փնտրներ, որոնք Յորդանանէն իսրայէլեան հողեր թափանցած էին: Բանա-

կը յայտնեց, որ Յորդանանի իշխանութիւնները անուղղակի կերպով տեղեակ պահած էին Իսրայէլը, որովհետեւ սահմանագիծին վրայ յորդանանցի փնտրներ բախում ունեցած էին փնտրներուն հետ: Իսրայէլ չյայտնեց, թէ որոնք են փնտրները: Իսկ Կապալի մէջ, իսրայէլեան ուժերը սպանուեցին չորս պաղեստինցիներ, որոնք են թաղարար կը պատրաստուէին յարձակումներ գործելու հրէական բնակեցման վայրերու վրայ: Այս յորդանանի մէջ, պա-

Շարք՝ էջ 10

## ՊԵՐՐԻԹԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԵ ՓՇՈՏ ՀԱՐՑԵՐ

Արաբական վեհաժողովի նախագահութեան արած աշխատանքներու ծիրէն ներս, երէկ Պէյրութի մէջ ժողով մը գումարեցին արաբական երկրներու արաբներու գործող նախարարները:

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա իր բացման խօսքին մէջ ըսաւ, որ Միջին Արեւելքը անորոշ ապագայի մը սեմին կը գտնուի, ուր յստակ չէ, որ խաղաղութիւնն ու արդարութիւնը պիտի տիրեն, թէ՛ ամբողջական անիշխանութիւնն ու ճակատումը: Մուսա զիտեղ տուաւ, որ արաբական աշխարհին գլխաւոր մարտահրահրները պաղեստինեան հարցն ու արաբներու իսրայէլեան տագնապն է: Ան աւելցուց, որ մարտահրահրներէն մէկն է նաեւ արաբական երկրի մը դէմ սպառնալիքն ու հաւանական յարձակումի մը կարելիութիւնը: Մուսա ըսաւ նաեւ, որ արաբները կը զիմացաբեւ արշաւ մը, որ թիրախ կը զարձնէ իսրայէլեան քաղաքակրթութիւնը, արաբական մշակույթն ու արաբական զիմացիւնը: Ան կ'սկիսէր կէս 11 Սեպտեմբերի դէպքերէն ետք արաբներու եւ իսրայէլեան զէմ Արեւմտեան որդեգրած կեցուածքին:

Արաբ նախարարները, որոնց ժողովը տեղի ունեցաւ «Ֆեհիսա» պան-

դոկին մէջ, քննարկեցին սեղուտական խաղաղարար նախաձեռնութիւն մը, որուն գծով որոշում պիտի տրուի վեհաժողովին, որ պիտի սկսի վաղը: Նախարարներու պարտականութիւնն է նաեւ պատրաստել բանաձեւերու սեւաղիւրներ, որպէսզի գտնուէն երկրայացեան վեհաժողովին: Երբ նախատեսուի, որ բանաձեւերուն մէջ պահանջուի, որ իսրայէլ հե-

ռանայ արաբական գրաւեալ բոլոր հողերէն՝ վերագոծնալով նախագահութեան (1967) սահմանագիծին: Արաբները իսրայէլէն պիտի պահանջեն, որ ընդունի պաղեստինեան անկախ պետութեան մը հաստատումը Կապալի եւ Այսրյորդանանի մէջ, մայրաքաղաք ունենալով Երուսաղէմը: Կը նախատես-

Շարք՝ էջ 10

## ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՃԷՔ ՍՔԱԹ ԵՐԵՒԱՆ Կ'ԱՅՅԵԼԵ

Միացեալ Նահանգներու Բայիֆորնիա նահանգի ծերակուտական ձեռք Սքաթ, որ Հայաստան կը գտնուի. Այգային ժողովի Հ. Յ. Կարապետեանի եւ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին նախաձեռնութեամբ, երէկ հանդիպում ունեցաւ Այգային ժողովի ղեկավարութեան հետ: Հանդիպումին մասնակցեցան նաեւ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի անդամներ Պերճ Կարապետեան եւ Արթիւր Մանուկեան:

Այգային ժողովի Հ. Յ. Կարապետեան ղեկավար Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին հայապատ գործունէութիւնը, տեղեկացուց, որ այցելութեան նպատակով Հայաստանի առեւտրական կապերը համակարգող գրասենեակի մը բացումն է:

Սքաթի ինդրանքով Այգային ժողովի փոխ նախագահ Տիգրան Թորոսեան ներկայացուց խորհրդարանի ընտրակարգը, կառույցը, աշխատեցնելու եւ ընդհանրապէս քննարկող կարելու օրինակները: Իր կարգին, Սքաթ տեղեկացուց, որ 3 Այգային Միացեալ Նահանգներու ժողովարարի համապատասխան յանձնարարութիւն պիտի ներկայացնէ առեւտրական գրասենեակի ստեղծման իր օրինակները եւ համապատասխան կը գրասենեակի բացումը կը նպաստէ Հայաստանի եւ Բայիֆորնիա նահանգին միջեւ յարաբերութիւններու ընդարձակման: Սքաթ Թորոսեանի փոխանցեց իր ներկայացրելիք օրինակները պատճէնը:

## ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԵՆ ՆԱՄԱԿ Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՍՄԵՏԻՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին յղած է նամակ մը, որուն մէջ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը կը իրաւիւրէ ներկայ ըլլալու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տասնամեակին առիթով կայանալիք յոբելեանական հանդիսութեան՝ 25 - 26 Մայիս, Երեւան:

Իր նամակին մէջ նախագահ Քոչարեան կը նշէ, որ անցնող տասնամեակին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը իրագործեց շինարարական, քնկերային եւ մշակութային հարիւրաւոր ծրագիրներ Աղետի Գօտիին, Արցախի եւ Հայաստանի տարբեր մարզերուն մէջ: «Այս բոլորը հնարաւոր եղաւ իրագործել նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան կատարած նուիրատուութիւններուն շնորհիւ», կը գրէ նախագահ Քոչարեան:

Նամակին մէջ կը յիշուի, որ Հիմնադրամին տասնամեակ գործունէութիւնը արժանաւորապէս նշելու եւ բարերարներու ու նուիրեալներու գործունէութիւնը գնահատելու նպատակով պիտի կայացուին հանդիսութիւններ, որոնց շարքին՝ Պատուով պատի բացում:

## ԾԱՂԱԶԱՐԴԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՆԵՐՍ

Կիրակի, 24 Մարտին, Ծաղկազարդի օրը Լիբանանի հայկական բոլոր եկեղեցիներէն ներս հանդիսաւոր կերպով ողբկոչուեցաւ Յիսուսի Երուսաղէմ մուտքը հողեպարար արարողութիւններով եւ մանուկներու թափօրներով:

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յաւարտ Ս. պատարագի Արամ Ա. վեհափառ հայրապետը իր պատգամը չլքեց ներկայ մեծաթիւ հասարակութեանը՝ ըսելով. «Մեր հողինքը վերածենք Երուսաղէմի, ուր մտնէ Յիսուս յաղթական կերպով»:

Յետմիջօրէին բոլոր եկեղեցիներէն ներս կատարուեցաւ Դանբացքի արարողութիւն:



Անթիլիասի Մայրաճառքի բակը կը յորդի հաւատացեալներով:



Ներսէս Պետրոս ԺԹ. կ'առաջնորդէ թափօրը:



Սրբոց Զատնայի Մանկանց եկեղեցոյ շուրջ հանդիսաւոր թափօր: (Լուսանկարները՝ Պ. ՋԱՐՈՒԿԵԱՆԻ)

## ՇԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Համապային Հայ կրթական եւ Մշակութային Միութեան Դ. Պատգամաւորական Ժողովը գումարուեցաւ Լիբանանի մէջ 21ին 24 արտին, մասնակցութեամբ Համապայինի շրջաններու պատգամաւորներու եւ իրաւիբեալներու:

Պատգամաւորական Ժողովը, իր յաջորդական նիստերուն ընթացքին, լսեց ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան նիստաբարոյական տեղեկագիրը, քննեց անոր գործունէութիւնը, գնահատեց ցուցաբերած բնաւորութիւնը եւ արդիականացման ճիգը, ըմբռնումով մօտեցաւ առկայ դժուարութիւններուն:

Մասնաւոր ուղարկութեան առարկայ եղան Համապայինի Կոյք ձեւարանները (Լիբանան եւ Ֆրանսա), Հայագիտական Հիմնարկը, տպարանն ու հրատարակչականը, մասնաճիւղերու ծաւալած քաղաքներու գործունէութիւնը՝ մշակութի պահպանման արկերէն ներս: Ժողովը լայնօրէն անդրադարձաւ նաեւ հայ մտաւորականութեան առնչուող հարցերուն:

Պատգամաւորական Ժողովը գծեց նաեւ յառաջիկայ քառամեակին համար Համապայինի գործունէութեան հեռանկարները: Խոր վերլուծման ենթարկուեցան Համապայինի նիստական կարելիութիւնները եւ անոնց գոյացումը:

Պատգամաւորական Ժողովը, յետ տեսակետներու փոխանակութեան եւ լայն քննարկումներու, յանգեցաւ համապատասխան եզրակացութիւններու, որոնք, որպէս հաւաքական կամքի արտայայտութիւն, յառաջիկայ քառամեակին համար ուղեցոյց պիտի ըլլան:

Իր աշխատանքներու ւարտին, Պատգամաւորական Ժողովը ընտրեց նոր Կեդրոնական Վարչութիւն, որ գումարեց իր անդրանիկ ժողովը 25 Մարտ 2002ին, Նշան Փալանճեան ձեւարանի իր կեդրոնին մէջ, եւ ընտրեց իր դիւանը:

- Նորընտիր Վարչութեան անդամներն են.
- Մկրտիչ Մկրտիչեան՝ ատենապետ (Լիբանան)
- Վարանդ Ալեքսանտրեան՝ փոխ ատենապետ (Լիբանան)
- Գեղանի Էթիէմէյեան՝ ատենադպրոցի (Լիբանան)
- Անդրանիկ Մալբուշեան՝ գանձապահ (Լիբանան)
- Սարգիս Արմէնեան՝ հաշուապահ (Լիբանան)
- Ռուբեն Յովսէփեան՝ խորհրդական (Հայաստան)
- Սեդրակ Պալեան՝ խորհրդական (Լիբանան)
- Վրէժ-Արմէն Արթիւրեան՝ խորհրդական (Քաղաքատ)
- Եղուարդ Մալբուշեան՝ խորհրդական (Միացեալ Նահանգներ)
- Սելլա Թանուկեան՝ խորհրդական (Մեծն Բրիտանիա)
- Յակոբ Պալեան՝ խորհրդական (Ֆրանսա)

ԴԻՒՆ  
Դ. ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ



# ԱՐԱՔ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԻՐԱՔԸ ՀԱՐՈՒԱԾԵԼՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ԴԵՄ ՉԵՆ

Կ'ԸՍԵ Տ. ՉԵՅՆԻ  
Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնի անցեալ շաբաթավերջին յայտնեց, որ Միջին Արեւելքի արաբ ղեկավարները Իրաքը հարուածելու ամերիկեան ծրագիրին հակառակ չեն:

«Մի. Պի. Էս.» կայանին տուած մէկ հարցազրոյցին ընթացքին Չէյնի խօսեցաւ Միջին Արեւելք իր կատարած 12 օրուան շրջապատուի ընթացքին արաբ ղեկավարներու հետ տեսակցութիւններուն մասին եւ նշեց, որ արաբ ղեկավարներ երբէք չեն հակառակած Իրաքի վրայ ամերիկեան հաւանական յարձակումի ծրագիրին:

«Ես շրջապատույ աւարտեցի այն տպաւորութեամբ, որ արաբ ղեկավարները նաեւ կը բաժնեն մեր մտահոգութիւնը», ըսաւ Չէյնի:

Իր խօսքին մէջ Չէյնի յիշեց, որ կարգ մը արաբ ղեկավարներ Իրաքարկաւ կատարած իրենց ճանաչումն մէջ դէմ արտայայտուած են Պաղատի դէմ կատարուելիք ամերիկեան պիւտրակաւ գործունէութեան, սակայն խորքին մէջ անոնք բաժնած են Ուաշինկթընի մտահոգութիւնը հաւաքական քանդումի պէնթըրոն պահեստը աւելցնելու Սատտամ Հիւսէյնի ծրագիրին անուշութեամբ: «Կրնամ ըսել, որ համաշխարհային մտահոգութիւն գոյութիւն ունի Իրաքի մէջ կորիպային ռուսներ եւ հաւաքական քանդումի պէնթըրոն բազմացնելու իմաստով», աւելցուց Չէյնի:

## ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ԾՐԱԳՐԷ ԱՒԵԼՅՆԵԼ ԿՈՐԻՋԱՅԻՆ ՀՐԹԻՌՆԵՐՈՒ ԻՐ ՊԱՀԵՍՏԸ

Մ. Նահանգներ կը ծրագրեն ռազմավարական 2400 կորիզային զլուխներ ունենալ 2012ին: Անոնք պիտի աւելնան 1700էն 2200 զլուխներուն, որոնց մասին Ուաշինկթըն հրապարակաւ կը խօսի ընդհանրապէս, յայտնած են զինքերու տարածումին կապուած հարցերու մասնագէտներ շաբաթավերջին:

Մասնագէտները, որոնք այս ամսուան սկիզբը գեկուցում լսած են ամերիկացի պաշտօնատարներէ, յայտնած են, թէ նախագահ Ճորձ Պուշի վարչակարգը կը ծրագրէ նաեւ թիրախ ունենալ 2200 զլուխներ թիւը, որուն զծով անիկա կը յուսայ համաձայնութիւն մը ապահովել Մայիսին Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Պութինի հետ:

Մինչ այդ, ամերիկացի եւ ռուս բանազնացներ Ուրբաթ օր ժրնեի մէջ աւարտած են կորիզային զինքերու համաձայնութեան զծով բանակցութեանց նոր ռաուտը մը, յայտնելով, թէ աստիճանաբար թիւները նուազած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԻՏԱԼԻԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՍԵՆՏԻՔԱՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ՝ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ

ՀՌՈՄ. 25 (ՌՈՅԹԸՐԸ). - Իտալիոյ մէջ կառավարութեան եւ աշխատատեղի միութիւններու միջեւ յարաբերութիւնները լարուեցան, երբ նախարարներ ամբաստանեցին աշխատատեղի մեծագոյն սենտիքան աշխատանքի նախարարի խորհրդակցականի սպանութեան յանցանքով:

Այս ամբաստանութիւնը յաջորդեց անցեալ շաբաթավերջին Հոմի մէջ կատարուած ցոյցերուն: Շաբաթ օր աշխատանքի օրէնքներուն անհշուտեամբ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի կատարելիք փոփոխութիւններուն դէմ շուրջ երկու միլիոն իտալացիներ Հոմի մէջ ցոյց մը կատարեցին,

Շաբ.՝ էջ 10

## Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ-ԷՇՐԵՖԻԷ ՅԻՇԱՍԿԿ ՏԱԸ ԿՈՅՄԵՐՈՒ

Շայք. Առաքելական Եկեղեցւոյ տպաւորիչ արարողութիւններէն մէկն է Տաք Կոստանացիներ, որ պիտի կատարուի Էշրեֆիէի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ հանդիսարան կերպով՝ այսօր՝ Աւագ Երեքշաբթի, 26 Մարտ 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին: Արարողութեանց սպասարկութիւնները պիտի կատարեն մեր Եկեղեցւոյ դպրոցիները: Օրուան գլխաւոր խորհրդածութեան ճիւղը

## ԻՍԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸԱՅ ԿՈՅՍԸ

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ ի մասնաւոր ի հայ մայրերը եւ հայկական վարժարաններու միջնակարգի եւ երկրորդականի աշակերտուհիները:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

# ԱՃՊԱԿ ԱՃԳԱՆԻՍԱՆ «ՔԱՅԻՏԱ»Ի ԶԻՆԵԱԼՆԵՐ ԿԸ ՓՈՐՁԵԻՆ ԸԱԻԱՔԱԿԱՆ ԲԱՆԴՈՒՄԻ ԶԵՆՔԵՐ ՄՇԱԿԵԼ

ԱՖղանիստանի իշխանութիւնները երէկ ամերիկեան ուժերուն դաշնակից 2 զինուոր ձերբակալած են՝ արեւելեան ինոսթ քաղաքին ապահովութեան պատասխանատուին վրայ յարձակումի մը պատճառով:

Ձերբակալութիւնները ցուցանիչ են Աֆղան պատերազմի «իշխան»ներու միջեւ իշխանութեան շուրջ պայքարին: Անոնք նաեւ հարցադրուածներու դուռ բացած են ամերիկեան մասնաշառուկ ուժերու կողմէ զրեթէ վարձակներուն օգտագործումը՝ թախկան եւ «Քալիտա»ի զինեալներու դէմ:

Խոսթ նահանգին կառավարիչը՝ Մուհամէտ Իպրահիմ յայտնած է, թէ ձերբակալուները ամերիկացիներու կողմէ մարզուած խմբակի մը մաս կը կազմեն, եւ թէ անոնք մարտահրաշխանուողով են Կիրակի օր զինքերը ապագինելու ինոսթ քաղաքի ապահովութեան պետ՝ Սուր Կուլի ճիգերուն:

Խոսթ նահանգը մէկն է Աֆղանիստանի պաշտպանութեան նախարարութեան կողմէ նշուած 5 նահանգներու, որոնք թախկան եւ «Քալիտա»ի անդամ զինեալներու ապաստան կրնան ըլլալ՝ ամերիկեան եւ աֆղան ուժերուն դէմ նոր յարձակողականի մը նպատակով վերախմբուելու համար:

Նախարարութեան հազարական զինուոր զրկած է իւրաքանչիւր նահանգ՝ ըմբոստներու դէմ քայլերու ղիմելու համար, եթէ անոնք տեսնուին այդ շրջաններուն մէջ:

Երկիրը խաղաղեցնելու նպատակով, նախարարութիւնը նաեւ ձեռնարկած է «նուր» ծրագիրի մը պատերազմի «իշխան»ները ապագինելու համար:

Միւս կողմէ, Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ճէյք Սթրո Կիրակի օր հերքած է, թէ Աֆղանիստան զրկուող քրիտանական ուժերը «վիթեման մասնաւոր պատերազմ»ի մը վիճակին մէջ կը մտնեն եւ թէ անոնք կրնան տարիներով հոն բանտարկուած

մնալ: Բրիտանիա անցեալ շաբաթ յայտարարած էր, թէ Աֆղանիստանի մէջ ամերիկեան ուժերու կողքին ճակատելու համար 1700 զինուոր պիտի ղրկէ:

## ԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԳԻՏԱՇԽԱՍԱՆՈՅ

Մինչ այդ, ըստ Աֆղանիստանի մէջ ամերիկեան ուժերու հրամանատար Գորվար Թոմի Ֆրէնքսի, ամերիկեան ուժերը Աֆղանիստանի մէջ փաստեր գտած են, թէ «Քալիտա»ի զինեալներ կը փորձէին հաւաքական քանդումի զինքեր մշակել, սակայն անոնք չեն յաջողած:

Հարաւային Աֆղանիստանի մէկ կեդրոնին մէջ՝ Գանտահարի մօտ, յայտնապէս մարդիկ կը պատրաստուէին անթրաքս եւ մահացու այլ նիւթեր արտադրել, երբ անիկա գտնուած է այս ամսուան սկիզբը, ըսած է Ֆրէնքս:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՅԻՄԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ

## ՔԱԿԻ ԱՆԴՈՒՄՆԵՐ ԿԸ ՄՊԱՆՆՈՒԻՆ

Իրաքի քիւրտներու աղբիւրները շաբաթավերջին յայտնած են, թէ ռազմական օդանայեր անցեալ շաբաթ հիւսիսային Իրաքի մէջ ՔԱԿԻ կեդրոնները նմանապէս ուժերը 25 հոգի սպաննելով, սակայն անմիջական չէ յստակացած, թէ օդանայերը ո՞ր կէ

կէ մէջ: Թուրքիոյ կողմէ եկած «ԷՖ-16» տիպի 4 օդանայեր տարբեր վայրեր ուժակոծած են Հինգշաբթի գիշեր: ՔԱԿԻ հապարաւոր պիւնեալներ ունի շրջանին մէջ: Հինգշաբթի օր անոնք անմիջական Նորուզ տօնախմբած են:

«Մեծփոքամիա» լրատու գործակալութիւնը, որուն կեդրոնը Երուսալ կը գտնուի, հաղորդած է, թէ ուժակոծումներուն ընթացքին սպաննուած են, իսկ ՔԱԿԻ մօտիկ աղբիւրներ հաղորդած են, թէ 25 պիւնեալ սպաննուած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՇՍՏ ՍՈՍԿՈՒՅԻ

## ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՄՊԱՆՆԱԾ Է 12 ՀԱԶԱՐ ՉԵՉԻՆ ԸՄԲՈՍՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ, 25 (ՌՈՅԹԸՐԸ). - Ռուսիա երկուշաբթի օր յայտնած է, թէ իր ուժերը 1999էն ի վեր անջատողական Չեչենիոյ մէջ աւելի քան 12

հազար ըմբոստ սպանած են, սակայն մարդկային իրականը խմբակներ այդ թիւը չափազանցուած նկատած են: Պաշտպանութեան նա-

խարարութեան մէկ բանբերը յայտնած է, թէ նշուած թիւին մէջ (12,760 ստոյգ մահեր) նկատի չեն առնուած քաղաքային զոհերը:

## Ս. ԲԱՌԱՍԻՅ ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂԱՄԱՆ ԹՎՓՈՐ

Աւագ Ուրբաթ, 29 Մարտ 2002ին, մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի չարաբանաց, խաչելութեան ու թաղման յիշատակին սրբազան արարողութիւնը պիտի կատարուի Նոր Մարաշի Սրբ. Բառասից Սանկանց Եկեղեցւոյ մէջ:

Այս առիթով յետ արարողութեան թաղման հանդիսարան քաղաքի պիտի կատարուի, մասնակցութեամբ քահանայից դասին, դպրաց դասին եւ հաւատացեալ ժողովուրդին:

Եկեղեցական արարողութեան եւ թափօրին պիտի նախագահէ ու քարոզէ

## ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Շայք Թեմի)

Ժամերգութիւն՝ Թափօր Ժամը 4:30ին Թափօր Ժամը 5:15ին

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին բոլոր զաւակներուն՝ մասնակցից դառնալու թաղման արարողութեան ու զօրանալու մահով Յարութիւն կերտած Քրիստոսի խաչով:

ՄՐՈՅ ԲԱՌԱՍԻՅ ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## Տ. ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԵՒ Յ. ՊԵՐԻ ՏԻՐԱՑԱՆ «ՕՍԲԱՐ»ՆԵՐՈՒ



Ուաշինկթըն եւ Պերի

«Օսքար»ներու մրցանակաբաշխութեան 74րդ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի երեկոյեան, Լոս Անճելըսի մէջ: Հանդիսութեան մեծագոյն սեականկարը դարձաւ երկու սեւամորթ դերասաններու տիրացումը յաղորդի գերասանի եւ յաւազոյն դերասանուհի մրցանակներուն:

«Օսքար»ներու 73 տարուան պատմութեան մէջ, սեւամորթ մէկ դերասան՝ Միտչի Փուլթի 1963ին արժանացած էր յաւազոյն դերասանի «Օսքար»ին:

Սեւամորթ դերասան Տենզը Ուաշինկթըն յաւազոյն դերասանի «Օսքար»ը շահեցաւ «Թրէյնինկ Տէյ» ժապաւէնին մէջ իր խաղարկութեան համար: Իսկ զերասանուհի Հայ Պերի «Մոնթրըլ Պոլի» մէջ խաղարկութեան համար: Իր խօսքին մէջ Պերի յայտնեց, որ մրցանակը կը նուիրէ անիկի համար - ամերիկացի բոլոր դերասանուհիներուն, որոնք իրմէ առաջ պայքարած են ու սակայն չեն արժանացած «Օսքար»ի մը:

Հաւազոյն ժապաւէնի «Օսքար»ին տիրացաւ «Էլ Պիլոթիֆոլ Մայն»ը, որուն բեմադրիչը Ռոն Հաուըրտ արժանացաւ նաեւ մրցանակի:

(ՌՈՅԹԸՐԸ)

## «ԱՋՂԱԿ»Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ «ՕՍԲԱՐ»Ի ՄՐՑԱՆՔԸ

«Օսքար»ներու 74րդ մրցանակաբաշխութեան նախօրեակին, 8-23 Մարտ, «Այդակ» կայմակերպած էր «Օսքար»ի հաւանական մրցանակակիրները ճշդելու մրցանք մը, որ բաղկացած էր 6 մասերէ (24 բաժին):

Նախապէս յայտարարած էինք, թէ իւրաքանչիւր բաժնի ճշդ պատասխանողը կը ստանայ կէտ մը, իսկ 10 կէտէն աւելի հաւաքողները կ'իմաստագործեանք պիտի ստանան պարգեւներ:

Գլխաւոր պարգեւը՝ Պէրլուք-Լոնտոն-Պէրլուք օդանայի տոմսով մը, ստանալու համար մասնակցողները պէտք է պատկովէին 20-24 կէտ: Ոչ մէկ մասնակցող յաջողեցաւ ապահովել 20-24 կէտ:

10էն աւելի կէտ ապահոված են հետեւեալ մասնակցողները՝ Նանոր Գէորգ Փոյատեան, Գարէն Վահէ Քիլէճեան, Յակոբ Սիրակ Տէր Դուկասեան եւ Թամար Արամ Փանտեան:

Յետ վիճակագրութեան մրցանակներու բաշխումը կատարուեցաւ հետեւեալ ձեւով.

- Թամար Արամ Փանտեան, անգլիական ոսկի մը՝ տրամադրուած «Jewelry Modern»-ի կողմէ:

- Նանոր Գէորգ Փոյատեան, «Սանիօ» Սի. Տի. փլէյրը մը՝ տրամադրուած «Պալապայեան Էլէքթրիք»-ի կողմէ:

- Յակոբ Սիրակ Տէր Դուկասեան, շարժապատկերի 10 տոմսով՝ տրամադրուած Cinemax Freeway կողմէ:

- Գարէն Վահէ Քիլէճեան, շարժապատկերի 10 տոմսով՝ տրամադրուած Cinemax Freeway կողմէ:

Մրցանակակիրները իրենց պարգեւները ստանալու համար Ուրբաթ, 29 Մարտի երեկոյեան ժամը 3:00-6:00 պէտք է ներկայանան «Այդակ»-ի իմպարատուն, «Շաղկոյեան» կեդրոն, Ա. Յարկ:



# ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

# ԼՈՒՐԵՐ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ

## ՃԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՍԱԿԻ ԶԵՆՆԱՐԿԻ 35ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Շաբաթ, 16 Մարտի յետմիջօրեի ժամը 16:00ին, Ճինիշեան Յիշատակի Զեռնարկի հիմնադրութեան 35ամեակին առիթով տեղի ունեցաւ ընդունելութիւն մը Պուրճ Համուտի վերանորոգուած կեդրոնին մէջ:

Ներկայ էին Լիբանանի Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Հ. Վարդան եպս. Աշգարեան, Հայ Աւետ. համայնքի կեդրոնական Մարմինի ատենապետ վեր. դոկտ. Փօլ Հայտոսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան եւ այլ անձնաւորութիւններ:



Բացման խօսքը կատարեց Լիբանանի Ճինիշեան Յիշատակի Զեռնարկի տնօրէն Սեդա Փամպուլեան, որ ամփոփ տեղեկութիւն փոխանցեց Ճինիշեան Հիմնարկին մասին: Սեդա Փամպուլեան անդրադարձաւ նաեւ կեդրոնի վերանորոգութեան եւ բարեկարգման, որ կը նպատակադրէ աւելի հանդուստեւտ եւ յարմար պայմաններ ստեղծել հիմնարկի պաշտօնէութեան եւ այցելուներուն համար:

Այնուհետեւ յարգաբար խօսք աւոյն Ճինիշեանի



Լիբանանի խորհրդատու Մարմինի ատենապետ տոքթ. Ռորոյթ Զորպաճեան, Զեռնարկի Միացեալ Նահանգներու խորհրդատու Մարմինի ատենապետ վեր. Վիքթոր Մաքարի եւ գործադիր տնօրէն վեր. Տէյվիտ Նիւրն: Ընդունելութեան պաշտօնական բաժինը վերջ գտաւ Գեղամ եպս. Խաչերեանի «Պահպանիչ»ով:

Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ ներկաները առիթ ունեցան դիտելու վերանորոգուած կեդրոնի զանազան բաժանմունքները: Ներկաներուն բաժնուցեցան նաեւ Հայկ թիլպեանի նուիրուած եւ մակագրուած մարդը՝ ամբողջական հայրը՝ գրքոյկը եւ Ճինիշեան Հիմնարկի 35ամեակին նուիրուած գրքոյկ մը:

**L. O. ԽԱԶ**

## ԳԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՇԱՐՔ

Լիբանանահայ Օգնութեան Խաչի Շրջանային Առողջապահական յանձնախումբի եւ «Արաքսի Պուլ-դուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի նախագահական բաժանմունքի կազմակերպութեամբ, 15 Մարտի երեկոյեան ժամը 8:00ին, կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սեռային գործարաններու միջոցով փոխանցուող հիւանդութիւններու մասին դասախօսութիւն մը:

Օրուան դասախօսը՝ տոքթ. Գէորգ Սէմէրճեան սեռային գործարաններու միջոցով փոխանցուող հիւանդութիւնները բաժնեց տարբեր խումբերու, ինչպէս՝ մանրէներու, ժահրերու, սուսկերու եւ մակարոյններու պատճառով յառաջացած հիւանդութիւնները:

Ան բացատրեց, թէ այս հիւանդութիւններով կը վարակուին հաւասարապէս կիներն ու տղաները, սակայն կիներու մօտ արտանշանները աւելի բացայայտ են: Այդ պատճառով, երբ կնոջ մօտ արտանշաններ երեւին, պէտք է անոր ամուսինը եւս քննութիւններու ենթարկուի:

Բժիշկը նշեց, թէ արտանշաններու բացայայտման պարագային պէտք է անպայման բժիշկի դիմել եւ պարագայական դեղեր եւ րուսուսներ չորդեգրել: Ան նաեւ անդրադարձաւ այս փոխանցուող հիւանդութիւններու կանխարգիլման միջոցներուն:

## Ի ՆՊԱՍ ԸԱՅԱՍԱՆԻ ԵՒ ԱՐՅԱՆԻ

### ԳԵՂԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍ

Նախաձեռնութեամբ Մերձուոր Արեւելքի մէջ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչ Կարօ Քէպապճեանի եւ հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանի, 15 Մարտին Հայ Աւետ. համայնքի Միութեան (Հ. Ս. Գ. Մ.) կեդրոնին մէջ տեղի ունեցաւ գեղանկարչական ցուցահանդէսի բացում:

Ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ Գեղամ եպս. Խաչերեան, վեր դոկտ. Փօլ Հայտոսեան, Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրո-



նական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան, պետական երեսփոխաններ, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան եւ ազգային, մշակութային եւ քաղաքական անձնաւորութիւններ:

Յուզահանդէսին նպատակն է Հայաստանի եւ Արցախի մէջ գտնուող Հ.Ս.Գ.Մ.ի 28 մասնաճիւղերու բարգաւաճման եւ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքին մէջ նոր կեդրոնի մը հիմնադրութեան օժանդակել:

## ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց եկեղեցւոյ Լիբանանի Թեմի կիւրակնորեայ վարժարաններու կրօնական դաստիարա-



Մրցումն տեսարան մը:

կութեան խորհուրդի քարոզչական յանձնախումբը 9 Մարտին կազմակերպեց գարգացման մրցում մը, որուն մասնակցեցան 9 կիւրակնորեայ դպրոցներէ 12 - 14 տարեկան աշակերտներ:

Այս տարուան մրցումին իրրեւ նիւթ ընտրուած էր նոր կտակարանի «Գործք Առաքելոց» դիրքի առաջին 14 դուրսները:

Մրցումին առաջնութեան տիրացան Հայ Աւետարանական Եղբայրացուցութեան կեդրոնի աշակերտները, իսկ երկրորդ հանդիսացան Ս. Վարդանանց եկեղեցւոյ եւ Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ Շուշանեան կիւրակնորեայ դպրոցներու աշակերտները:

Մրցանակարաշխութեանը ետք խօսք աւոյն Կիւրակնորեայ դպրոցներու կրօնական դաստիարակութեան խորհուրդի ատենապետ Անդրանիկ Կարապետեան եւ Մակար արդ. Աշգարեան, որոնք իրենց գնահատանքի խօսքերը արտայայտեցին նոր սերունդին մէջ Աւետարանի ուսուցման մէջ խորանալու առիթ ընձայելուն համար:

## Ս. ՅՈՒՎԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՅՈՅ ՏԻԿԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

### ՄԻՋԻՆՔ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Կազմակերպութեամբ Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ Տիկնանց յանձնախումբին, հովանաւորու-



Պարգեւատրման հանդիսութեան տեսարան մը:

թեամբ եւ ներկայութեամբ Գեղամ եպս. Խաչերեանի եւ նախագահութեամբ եկեղեցւոյ Տիկնանց յանձնախումբի հիմնադիրներէն Էօթենի Մերտանեան, 15 Մարտին Հայաչէնի Ժողովրդային Տան «Սեդրակ Աճէմեան» սրահին մէջ տեղի ունեցաւ աւանդական միջինքի հանդիսութիւն եւ տարիներ շարունակ տիկնանց յանձնախումբերու մէջ ծառայած անդամներու պարգեւատրութիւն:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Տիկնանց յանձնախումբի ատենապետ Վերժին Բանիկեան, որ Աւետարանէն մէջբերում մը կատարելով շեշտեց սիրոյ, յարգանքի եւ գոհողութեան կարեւորութիւնը մարդկային կեանքին մէջ: Ան նշեց, թէ այս երեք հիմնական երեւոյթները պէտք չէ սահմանափակել նեղ եւ ճշդուած ծիրի մը մէջ, որովհետեւ անոնք ունին զանազան ուղղութիւններ եւ անպարփակ իմաստներ, որոնց կը հանդիպինք կեանքի գանազան պայմաններու եւ ժամանակներու մէջ:

# ԼՈՒՐԵՐ ՋԱՒԱԽՔԷՆ

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆԱԶՈՒՄԻ ՊԿԶԱՆՁ

Ախալքալաքի հայ բնակչութեան ներկայացուցիչներ կիրակի, 17 Մարտին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինօ Պուրճանաձէի հետ կապեցած հանդիպման մը ընթացքին պահանջեցին, որ Վրաստանի իշխանութիւնները պաշտօնապէս ճանչնան Հայկական Յեղասպանութիւնը:

Հանդիպման մասնակիցները յայտարարած են, որ շարք մը երկիրներ արդէն ճանչցած եւ դատապարտած են Հայկական Յեղասպանութիւնը, եւ նոյնը պէտք է կատարէ նաեւ Վրաստան:

## ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ԱՆԵՍԱՍՏԵՂԻՆԵՐՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ջաւախքի մէջ Վրաստանի նախագահի լիազօր ներկայացուցիչ Թեմուր Մոսիաշվիլի արտայայտուած է շրջանին մէջ աշխատատեղիներու ստեղծման ծրագիր մշակելու օգտին, որպէսզի բացառուի հաւանական դժգոհութիւնը Ախալքալաքէն ուսական զինուորական խարիսխին փակուածէն ետք:

«Բնակչութեան անհանգստութիւնը հասկնալի է, չէ՞ որ այդ զինուորական խարիսխին մէջ հազար հինգ հարիւր տեղացիներ կ'աշխատին եւ խարիսխէն կախուած է անոնց ընտանիքներուն բարեկեցութիւնը», րսած է Մոսիաշվիլի:

Ան աւելցուցած է, որ պէտք է լրջօրէն մտածել, թէ ինչպէս այդ մարդոց աշխատանք պիտի ապահովուի զինուորական խարիսխին փակուածէն ետք:

## ԱՆԱԼՔԱՎԱՔՅԻՆԵՐԸ ԳԷՄ ԸՆԹԱՍՏԱՆԻ ԽԱՐԻՍԽԻՆ ՓՈՎԱՄԱՆ

Ախալքալաքի հայութիւնը դէմ է շրջանէն ուսական 62րդ զինուորական խարիսխին փակման: 17 Մարտին Ջաւախք այցելած Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինօ Պուրճանաձէի հետ կապեցած հանդիպման ընթացքին Ախալքալաքի ներկայացուցիչները յայտարարած են, որ ուսական զինուորականներու Ախալքալաքի մէջ ներկայութիւնը կ'երաշխարհէր Ջաւախքի շրջանի կայունութիւնը:

«Փրայմ Նիուզ» լրատու գործակալութեան մէջ թղթակիցին հետ զրոյցի մը ընթացքին Ախալքալաքի հայութեան ներկայացուցիչները դժգոհութիւն յայտնած են Վրաստանի մէջ ամերիկացի զինուորական մասնազէտներու ներկայութեան առնչութեամբ: Նշեց, որ վերջիններս շրջան եկած են Վրաստանի պաշտպանութեան նախարարութեան յատուկ հակահարձակական ստորաբաժաններուն անձնակազմը մարզելու համար:

## «ՄԵՍԻԵԹՅԻ ԹՈՒՐԲԵՐՈՒՎ ԿԵՐԱՎԱՐՉԻՆ ԳԻՍՏԱՅ ՊԵՏՔ Ե ԱՊԱՀՈՎԵԼ ՋԱՒԱԽՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ԿԵՐԱՎԱՐՉԸ»

Կ'ԸՍԷ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԻԳ

«Փրայմ Նիուզ» լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը մէջ Վրաստանի խորհրդարանի հայ պատգամաւոր Վան Բայրեղը յայտնած է, որ Ջաւախքի հայերը պատրաստ են իրենց տունները գիւղի 1944ին ստալինեան վարչակարգին կողմէ այնտեղէն տեղահանուած մեսիսթիցի թուրքերուն, բայց միայն այն պարագային, եթէ միջազգային կազմակերպութիւններ փոխարէնը ապահովեն 180 տարի առաջ կարսէն եւ կարիսէն Վրաստան տեղափոխուած հայերու վերադարձը պատմական հայրենիք:

Ան նշած է, որ Եւրոպական խորհուրդը, ԵԱՀԿն եւ միջազգային այլ կազմակերպութիւններ, որոնք կը պահանջեն, որ Վրաստան ապահովէ Միջին Ասիա տեղահանուած մեսիսթիցի թուրքերուն վերադարձը: Նախ եւ առաջ պէտք է մտածեն 180 տարի առաջ Արեւմտահայաստանէն բռնագաղթած հայերուն հարգատեղի վերադարձնելու մասին:

Վ. Բայրեղը աւելցուցած է, որ որքան մեսիսթիցի թուրքերուն վերադարձին դէմ է ջաւախքահայութիւնը, նոյնքան դէմ են շրջանին մէջ բնակող վրացիները:

## ՀԱՆՐԱՔՈՒԵԻ ՊԿԶԱՆՁ ՋԱՒԱԽՔԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ջաւախքի մէջ գործող «Վիրք» կազմակերպութեան ղեկավար Դաւիթ Ռաստեան պահանջած է, որ Վրաստանի իշխանութիւնները հանրաքուէի դնեն Ջաւախքին ինքնավարութիւն տրամադրելու հարցը:

Դ. Ռաստեան յայտարարած է, որ Ջաւախքի ինքնավարութիւն տրամադրելու պահանջը ոչ մէկ ընդհանրութիւն ունի անջատողականութեան հետ, այլ կապուած է միայն այդ շրջանի բնկերային խնդիրները աւելի արդիւնաւէտ կերպով լուծելու անհրաժեշտութեան հետ:

Ան նշած է, որ Ախալքալաքի եւ Նիւնոմինտայի բոլոր 60 հազար ընտրողները պիտի պաշտպանեն Ջաւախքին ինքնավարութեան կարգավիճակ տրամադրելու պահանջը:

Ըստ Դ. Ռաստեանի, Ջաւախքի ինքնավարութեան հարցին շուրջ հանրաքուէի կապուած ժխտական հարցերու վերաբերեալ, որ ներկայիս Վրաստանի մէջ չկայ համապատասխան օրէնք: Ասոր համար ալ «Վիրք» կազմակերպութիւնը կը ծրագրէ ստորագրութիւններ հաւաքել Վրաստանի խորհրդարանին կողմէ այդպիսի օրէնք ընդունելու համար:

## ԱՐՅԱԽՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ՏԵՂԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը վերջերս հրատարակած է Արցախի Պետական համալսարանի եւ Հայաստանի Պետական համալսարաններուն մէջ Լեռնային Ղարաբաղի յատկացուած տեղերու, ինչպէս նաեւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններու 2002 թուականի ընդունելութեան մասնագիտութիւններուն եւ քննութիւններուն ցանկը:

Լեռնային Ղարաբաղի կրթութեան եւ գիտութեան փոխ նախարար Սլաւա Ասրեան րսած է, թէ համակարգին մէջ կարգ մը փոփոխութիւններ եղած են ընդունելութեան պայմանները աւելի յստակացնելու համար:

Արցախի Պետական համալսարանին մէջ յատկացուած է 200 տեղ, պահպանուած են նաեւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններուն մէջ նախորդ տարուէն զգաղուած տեղերը: Իսկ վճարովի համակարգին մէջ 610ի փոխարէն Արցախի Պետական համալսարան կրնան յաճախել 555 ուսանողներ:

Յատկանշական է, որ այս տարի նուազած են նաեւ շարք մը մասնագիտութիւններ, մասնաւորաբար հեռակալ ուսուցման համակարգին մէջ՝ 25ի փոխարէն 18 տեղով:

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

19 Մարտին ԵԱՀԿ Երեւանի գրասենեակի տնօրէն Ռոյ Ռիփ եւ Հայաստանի բնապահպանութեան նախարար Վարդան Այվազեան ստորագրեցին յուշագիր մը Հայաստանի մէջ բնապահպանական տեղեկատուութեան հասարակական կեդրոնի ստեղծման մասին:

Կեդրոնի հիմնական նպատակն է աւելի մատչելի դարձնել բնապահպանական տեղեկատուութիւնը եւ հասարակութիւնը մասնակից դարձնել այդ մարզին մէջ որոշումներու կայացման գործընթացին: Կեդրոնը պիտի նպաստէ բնապահպանական հարցերով ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի երկիրներու բնապահպանական հասարակական կազմակերպութիւններու միջեւ կապերու հաստատման:

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելի փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցիլ գիրով (հաստատութեան պարագային՝ Գալիմուրաքար պաշտօնակալ թուրքի վրայ, եւ՝ հաստատուած) Գերկալայցի «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԹՈՒՐՔ ԶՕՐԱՎԱՐԻ ՄԸ ԶԱՌԱՆՑԱՆՔՆԵՐԸ

1915ԻՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵՑ ՀԱՅԵՐԸ ՓՈԽԱԴՐԵԼ ԼԻԲԱՆԱՆ, ՈՐՈՎՐԵՏԵՒ ԱՆՈՆԸ ԿԸ ՅԱՐՉԱԿԵԻՆ ԹՐԵԱԿԱՆ ԳԻՂԵՐՈՒ ՎՐԱՅ ԵՒ ԿԸ ՓԱԿԵԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՃԱՄԲԱՆԵՐԸ

Թրքական բանակի սպայակոյտի ծրագրաւորումի եւ կանոնադրութեան բաժանմունքի ղեկավար գործուծ Ռեւաթ Թուրքուլ 19 Մարտին Ուաշինգթոնի մէջ մասնակցած է Թուրքեան թրքական խորհրդաժողովին, ուր իր արտասանած խօսքին մէջ, ի շարքս այլ նիւթերու, ան անդա՛ն դարձած է նաեւ այսպէս կոչուած հայկական

ահարեկութեան: Թուրքուլ ըսած է, որ 1974էն 1984 «Հայ ահարեկութեան սպանած են 34 թուրք ղիւանագէտներ, ահարեկական 153 յարձակումներու ընթացքին, իսկ Արեւմուտքը ոչ մէկ ձեռք բերած է այս ղեկավարները»:

Իր խօսքին մէջ Թուրքուլ կոչում յայտնած է, որ Թուրք ժողովուրդը եւ կառավարութիւնը յուսախար եղած են «այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութիւնը» ճանչնալու Թուրքիոյ ուղղուած Եւրոպական խորհրդարանի կողմէն, եւ թէ՛ Եւրոպայ այս հարցը իրրեւ գէնք կը գործածէ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան դէմ: «Այս հարցը պէտք է վստահուի պատմաբաններու: Եւրոպական խորհրդարանը, նախքան այդ փաստաթուղթին որդեգրումը, մասնագէտներու խումբ մը պէտք է նշանակէր իրողութիւնները ստուգելու համար», նշած է Թուրք գորավարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՅԱԻԵԼՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

Փետրուարի սկիզբը Սպիտակ Տան հրատարակած 2003 տարեշրջանի պիւտճէի նախագիծը 70 միլիոն տոլարի յատկացում կը նախատեսէ Հայաստանի տնտեսական օժանդակութեան համար, իսկ 46 միլիոն տոլար՝ Ազգայնական տնտեսական օժանդակութեան համար: Առաջարկուած պիւտճէն նաեւ կը ներառէ Հայաստանի եւ Ազգայնական համար համահաւասար գինուորական ընդթիւ օժանդակութիւն: Այսպէս, իւրաքանչիւր երկրի համար արտաքին գինուորական ֆինանսաւորումի գլխուն տակ կը նախատեսուի 3 միլիոն տոլար, իսկ միջազգային գինուորական դաստիարակութեան ու մարզումի գլխուն տակ՝ 750 հազար տոլար:

Չինուորական օժանդակութեան զծով երկու երկիրներու նկատմամբ հաւասարութիւնը պահելով հանդերձ, Պուշի վարչակազմը կը խախտէ հաւասարակշռութիւնը՝ տնտեսական օժանդակութեան բնագաւառին մէջ: 2002 տարեշրջանին համար Քոնկրէսին կողմէ հաստատուած վերջնական պիւտճէն Հայաստանին կը յատկացնէր մօտաւորապէս 90 միլիոն տոլար եւ Ազգայնականին՝ 43 միլիոն 431 հազար տոլար: Յառաջիկայ տարուան պիւտճէի նախագիծը Հայաստանի տնտեսական օժանդակութիւնը կը նուազեցնէ մօտաւորապէս 20 միլիոն տոլարով, իսկ Ազգայնականին համար կը կատարէ 2 միլիոն 700 հազար տոլարի յաւելում: Այսինքն՝ Հայաստանի օժանդակութիւնը կը կրէ աւելի քան 22 տոկոս նուազում, իսկ Ազգայնականի օժանդակութիւնը՝ աւելի քան 6 տոկոս յաւելում:

ամրապնդման: Հայաստան խորհրդային Միութեան նախկին հանրապետութիւններու շարքին միակն է, որ պետականօրէն ժողովրդավարական յստակ փորձառութիւն ունեցած է անցեալին: Երբ Հայաստան խորհրդայինացաւ 1920ին, երկիրը արդէն իսկ երկու տարուան ժողովրդավարական կեանք ապրած էր Հայաստանի անկախ հանրապետութեան մէջ: Այս իմաստով, քաղաքացիական ազատութիւնները, արդար պետական կարգերը, ազատ ընտրութիւնները, ընտրելու իրաւունքը, խօսքի եւ կազմակերպուելու ազատութիւնները մաս կը կազմեն Հայ ժողովուրդի քաղաքական աւանդութիւններուն: Ներկայիս էականը այդ աւանդութիւններուն զրոյացումն է, որ արդէն իսկ Հայաստանի ժողովուրդը կը կատարէ՝ թօթափելով համայնավար կարգերու տակ կուտակուած յոռի մտայնութիւնները, ապրելակերպը եւ աշխատելու ոճը: Ամերիկեան արդար եւ հաւասարակշռուած օժանդակութիւնը միայն պիտի սատարէ ժողովրդավարական իր աւանդները ամրորէն վերահաստատելու Հայաստանի ժողովուրդի պայքարին:

Անշուշտ, սխալ պիտի ըլլայ սուտեցանել այն խարկանքը, թէ Քոնկրէսը ինքնարուի պիտի դիմէ պիւտճէին մէջ Հայաստանի օժանդակութիւնը աւելցնելու նախաձեռնութեան: Գալիք ամիսներուն մեր աշխատանքները պիտի կեդրոնացնենք Քոնկրէսի այն յանձնարարներուն վրայ, որոնք իրաւասութիւն ունին վերանայելու, առաջարկելու եւ յստակացնելու Հայաստանի վերաբերող օժանդակութեան գումարները: Այս ուղղութեամբ բանալի դերակատարութիւն պիտի ունենան արտաքին յարաբերութիւններու եւ յատկացումներու յանձնարարները: Այս աշխատանքին մէջ չենք կրնար կարկամ մօտեցում ցուցաբերել:

ՍԵՂՈ ՊՈՅԱԾԵԱՆ

ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄ ԾԵՐԱԿՈՅՏԻ ԸԷՆՔԻՆ ՄԷՋ

15-19 Ապրիլին Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնարարութիւնը կազմակերպութեամբ, Մերակոյտի «Ռասըլ» շէնքին մէջ տեղի պիտի ունենայ «Ականատես» (Ուրիշնք) վերնագիրով ցուցահանդէսը, որ պատրաստուած է «Ճեռնասյա Փրոնէքթ» յի լուսանկարիչներ Արա Օշակեանի եւ Լեւոն Փարեանի կողմէ: Ցուցահանդէսին նպատակն է վերապրողներու պատմութիւններուն եւ լուսանկարներուն ընդմէջէն Հայկական Ցեղասպանութեան արհաւիրքը փոխանցել նոր սերունդին եւ մարդը աշխարհին:

«Ճեռնասյա Փրոնէքթ»ը ստեղծուած է Արա Օշակեանի նախաձեռնութեամբ: Հետագային նաեւ միացած է արհեստավար լուսանկարիչ Լեւոն Փարեան: Նշենք, որ Ապրիլ 17ին տեղի պիտի ունենայ Հայ Դատի Յանձնարարութիւնը տարեկան Ոգեկոյման Հաւաքը, որուն ընթացքին քննարկեալներն են քաղաքական ու հասարակական գործիչներ պիտի յիշատակեն Հայկական Ցեղասպանութեան 87ամակը:

ԻԼԻՆՈՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ ՅԻՇԵԼ ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Իլինոյի փոխ նահանգապետ Քորին Վուտ, Շիքակոյի հանրակրթարաններու նախկին գործադիր տնօրէն Փոլ Ուալըս եւ ծերակուտական Ռատ Պլակոնելի անցնող շրթաններու խոստացան, որ նահանգապետ ընտրուելու պարագային ամէն տարի յատուկ յատարարութեամբ մը պիտի յիշեն Հայկական Ցեղասպանութիւնը: Այս խոստումները կատարուեցան ի պատասխան Իլինոյի Հայ Դատի Յանձնարարութիւնը կողմէ թեկնածուներուն ուղղուած նամակներուն:

Թեկնածուներ Ուալըս, Պլակոնելի եւ Վուտ շեշտեցին Հայկական Ցեղասպանութիւնը պաշտօնապէս նշելու կարեւորութիւնը եւ գայն նկատեցին Իլինոյի նահանգապետին համար կարեւոր աւանդութիւն մը: «Իլինոյի նահանգապետը կրնայ կարեւոր դեր խաղալ ժողովուրդին ուշադրութիւնը Հայկական Ցեղասպանութեան վրայ կեդրոնացնելու մէջ: Իբրեւ նահանգապետ՝ ես պիտի հետեւիմ այդ աւանդութեան: Տակաւին այս ամիս ես ստորագրեցի նախագահ Պուշի ուղղուած նամակին տակ՝ գինք մղելու, որ Օսմանեան կայսրութեան կողմէ 1.5 միլիոն հայերու ջարդը ճանչնայ իբրեւ Ցեղասպանութիւն», ըսաւ ծերակուտական Պլակոնելի, որ նաեւ Քոնկրէսի հայկական հարցերու խմբակցութեան անդամ է:

Ցեղասպանութեան յիշատակման կողքին, Փոլ Ուալըս ընդգծեց, որ ինք կողմնակից է կրթական ծրագիրին մէջ Հայկական Ցեղասպանութեան տեղ տալու գաղափարին:

Հայ Դատի Յանձնարարութեան թեկնածուներուն ուղղուած իր նամակներուն մէջ շեշտած է Հայաստանի հետ կապերու ամրապնդման կարեւորութիւնը: Ուալըս այս գծով խոստացած է, որ իր վարչակարգը աջակցի Հայաստանի հետ մշակութիւն, առեւտրական եւ այլ մարզերու համագործակցութեան:

Պլակոնելի իր կարգին դիտել տրած է, որ ինք լինիլի կ'արակցի փոխանակման ծրագիրներու, որոնք կ'արակցեն Հայ եւ ամերիկացի ժողովուրդներուն կապերը:

«ՎԱՐԴԱՆ» ՊԱՆԴՈՎԻՆ ՀԱՐՅԸ ԿԸ ՎԵՐԱԲՃԱՐԾՈՒԻ

Թրքական «Չաման» օրաթերթի Վանի քղաքակցը կը տեղեկացնէ, քէ Վիքոր Պետոյեան վերջերս գտնուած ներկայացուցած է Թուրքիոյ մէջ Մ. Նահանգներու ղեկավարին «Վարդան» անունով իր պանդոկին փակման համար:

Մանօր է, որ Թուրքիոյ գրօսաշրջութեան նախարարուելը անցեալ տարի փակել տուաւ Վանի «Վարդան» պանդոկը անոր օրինակով, քեւ քրքական մամուլը օրին մտահոգութիւն յայտնեց, որ «Վարդան» անունը իբրեւ քէ «յաղարկակ կը նշանակէ եւ հայ պանդոկապետը յետին նկատակներ կը հետպանդէ այս պանդոկը բանալով»:

Այս հարցին կապակցաբար, Ատանայի մէջ Մ. Նահանգներու երկրորդ հիւպատոսը անցեալ շաբաթ Պետոյեանի հետ ունեցած է հանդիպում մը, որուն ընթացքին անկէ բացարձակութեամբ ստացած է հարցին գարգացումներուն մասին:

Պետոյեան իր պանդոկին կառուցման համար ծախսած է մէկ միլիոն տոլար:

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻՒԹ ԶԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ

Կ'ԸՍԵ Վ. ԱԹԱՆԵՍԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանէսեան 20 Մարտին յայտնեց, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներէն մէկուն այն յայտարարութիւնը, թէ Լեռնային Ղարաբաղը ընտւ մաս չէ կազմած անկախ Ազգայնականին, կը փաստէ, որ միջազգային ընտանիքը չի մտադրեր իրականութիւնները միշտ անտեսել:

Աթանէսեան ըսաւ, որ Լեռնային Ղարաբաղի անկախ իրավիճակը Ազգայնականի հետ բանակցութիւններու նիւթ չի կրնար ըլլալ եւ պէտք է միայն սահմանները ճշդելու շուրջ խօսակցութիւններ ըլլան: Ան դիտել տուաւ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ընտւ չէ որդեգրած անկախութեան փոխարէն պատերազմին իր ազատագրած հողերը վերագործնելու սկզբունքը՝ իրրեւ արտաքին քաղաքականութիւն:

«Միջազգային օրէնքի դիտանկիւնէն, Ազգայնականի պարտադրած պատերազմի ընթացքին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը գործադրեց ինքնապաշտպանութեան իր իրաւունքը: 1994ի զինուորական ետք Ազգայնական առկիւր ունեցաւ վիճելի բոլոր հարցերը բանակցութիւններով լուծելու», շեշտեց Աթանէսեան:

Վ. Աթանէսեան պնդեց, որ առանց դարաբաղեան կողմին բանակցութիւններուն մասնակցութեան, անկարելի պիտի ըլլայ հարցը լուծել:

Թուրք զինուորական մարտասանած է նաեւ Եւրոպայի կողմէ ահարեկական նկատուող կազմակերպութիւններու գորակցելու համար: Յատկապէս Եւրոպական կարգ մը երկիրներու մէջ ՔԱԿի եւ ձախակողմեան «ՏԻ. էյ. Քէյ. Փի.» (Ցեղափոխական ժողովուրդի Ազատագրութեան ճակատ) օրինական գործունէութեան ակնարկելով՝ Թուրքուլ ըսած է. «Եւրոպայ պէտք է հրաժարի ահարեկութեան գորակցելէ: Իբրեւ իսլամ, աշխարհիկ եւ ժողովրդավար երկիր, Թուրքիոյ անդամակցութիւնը՝ Եւրոպական Միութեան նաեւ կարեւոր նշանակութիւն ունի Արեւմուտքի շահերու տեսակէտէն»: Նոյն տրամաբանութեամբ եւ միշտ մեկնելով տիպար Թուրքիոյ մը մտապատկերէն՝ Թուրքուլ դիտել տուած է, որ Արեւմուտքին պարտականութիւնն է գորակցել Թուրքիոյ եւ գայն իբրեւ «տիպար պետութիւն» ներկայացնել իսլամ այլ երկիրներու: «Համայն մարդկութեան բարօրութեան համար Արեւմուտքը պէտք ունի արդի, աշխարհիկ եւ ժողովրդավար Թուրքիոյ մը, որ ունի մեծամասնութեամբ իսլամ ընդունութեան, իւրաքանչիւր դիրքէ եւ եւրասիական յատկանիշներ», եզրափակած է Ռեւաթ Թուրքուլ:

Հայաստանի օժանդակութիւնը պակասեցնելու եւ Ազգայնականինը աւելցնելու Պուշի վարչակազմին խաղը անընդունելի է: Վստահաբար, ինչպէս անցնող տարիներուն, Քոնկրէսը այս տարի եւս պիտի մերժէ վարչակազմի խաղին եւնթարկուիլու եւ յառաջիկայ տարուան համար պիտի վաւարացնէ պիւտճէ մը, ուր Հայաստանի տնտեսական օժանդակութիւնը եւնթարկուի աւելի արդար ու հաւասարակշռուած մօտեցումի:

Գոյութիւն ունին հիմնաւորեալ բազմաթիւ տրեւանքներ, որոնք կը հարկադրեն, որպէսզի Հայաստանի համար արդար ու հաւասարակշռուած տնտեսական օժանդակութիւն կատարուի: Հակառակ Պուշի վարչակազմի դիտաւորեալ անտեսումներուն, Քոնկրէսը նկատի պիտի առնէ այդ տուեալները:

ԱՌԱՋԻՆ, Հայաստանի համար ամերիկեան տնտեսական օժանդակութիւնը կենսական կարեւորութիւն կը ներկայացնէ, մինչ Ազգայնականի համար ամերիկեան օժանդակութիւնը յաւաքային խորհրդանշական ընդթիւ ունի: Հայաստան կարիքը ունի այդ օժանդակութեան, որպէսզի կարենայ մասամբ մը դարմանել Թուրքիոյ եւ Ազգայնականի շրջափակման պատճառած մեծագումար վնասները, որոնք տարեկան 722 միլիոն տոլարի կը հասնին: Համաշխարհային Դրամատան անցեալ տարուան տուեալներուն համաձայն, շրջափակումը կը չբացնէ Հայաստանի ազգային ընդհանուր արտադրութեան 30էն 38 տոկոսը եւ կը խափանէ Հայաստանի արտադրութիւններուն մօտաւորապէս 50 տոկոսին արտածումը: Հիմք ունենալով տոլոսային այս տուեալները եւ 2000 թուականի 1,9 միլիոն տոլարի հասնող Հայաստանի ազգային ընդհանուր արտադրութեան գումարը, Թուրքիոյ եւ Ազգայնականի շրջափակումը Հայաստանին կը պատճառէ տարեկան 570էն 722 միլիոն տոլարի ընդհանուր վնաս:

ԵՐԿՐՈՐԴ, յատկապէս 2003 տարեշրջանի համար Պուշի վարչակազմը բարոյական պարտաւորութեան տակ կը գտնուի տնտեսական յաւելեալ օժանդակութիւն տրամադրելու Հայաստանին: Այսօր գործադիր իշխանութիւնը գիտակցաբար ինքզինք գրկած է օրինական այս լծակէն, որ կը միտէր արգելք հանդիսանալ Հայաստանի դէմ կիրարկուող շրջափակումին: Ազատութեան գորակցութեան օրէնքի 907րդ պարբերութեան նախագահական շրջանումին պատճառով, Ազգայնական ապահով, ազատ ու անպատիժ կերպով կրնայ շարունակել իր շրջափակման քաղաքականութիւնը: Պուշի վարչակազմը ցարդ պահանջուած ոչ մէկ միջոցառումի ազգանշանը տուած է՝ սանձելու համար Ազգայնականը: Հետեւաբար այս վարչակազմը պէտք է բարոյական որոշ պատասխանատուութիւն վերցնէ շրջափակման պատճառով Հայաստանի կրած տնտեսական վնասներու նուազեցումն մէջ:

ԵՐՐՈՐԴ, Հայաստանի համար ամերիկեան տնտեսական օժանդակութիւնը կը խթանէ Հայաստանի ընկերային եւ տնտեսական բարեկեան ծրագիրները: Բնական հարստութիւններէ գերծ է Հայաստան: Սակայն երկիրը ժողովուրդը եւ ժողովուրդը ունի մասնազիտական լայն փորձառութիւն, որոնք լաւագոյն գրաւականներն են յառաջիկայ քանի մը տարիներուն երկրին մէջ կառուելու ու բարգաւաճ ապրելու կերպի հաստատման: Ամերիկեան օժանդակութիւնը կրնայ մեծապէս նպաստել այս նուաճումին յաջողութեան: Միւս կողմէ, քարիւղի իր ենթադրեալ պահանջարկը ունի ապահոված ըլլալու բարգաւաճ տնտեսական ու ընկերային կացութիւն մը: Եթէ Ազգայնական տագնապ ունի, անոր պատճառները կը կայանան երկրին մէջ տիրող համատարած կաշառակերութեան ու ցածորակ ենթակառուցներու առկայութեան մէջ: Ուստի, ամերիկեան որեւէ օժանդակութիւն անկարող է այդ պատճառները չէզոքացնել:

ԶՈՐՐՈՐԴ, ամերիկեան օժանդակութիւնը կ'ունենայ Հայաստանի մէջ ժողովրդավարական գրութեան


Haigazian University\* DIVISION OF MATHEMATICAL SCIENCES 47 YEARS OF COMMUNITY SERVICE ACCEPTING NOW APPLICATIONS FOR FALL 2002 B.Sc. Computer Science+ B.Sc. Mathematics B.Sc. Physics \*The computer science department is committed to offering a state-of-art curriculum that reflects the rapidly changing computing technology, and has signed several cooperation agreements with different computer software companies to offer its students training on the latest technology. \*Haigazian University is a member of the Association of American International Colleges and Universities. For further information contact: Phone: 01-349230, 01-353010, 01-353012 E-mail: admissions@haigazian.edu.lb Website: www.haigazian.edu.lb

# Աշակուրային ՀԷ

ԾՆՆԴԵԱՆ 70ԱՄԵԱԿ ԶՈՒՆՈՒՄ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԵՒ ԲՆԱՊԱՇՏ ԳԵՂԱՆԿԱՐԻԶԸ

1957ին, երբ տակալին Ջուլում Գրիգորեան հագիւ 25 տարեկան երիտասարդ գեղանկարիչ էր, երբ խորհրդային կարգերը խիստ եւ անբարեացակամ վերաբերմունք ունէին ազգայնական ձգտումներու հանդէպ, Հայրենասէր այս արուեստագէտը «կոտորած»ի մասին կ'երփնագրէր կոթողային գործ մը, որ այսօր կը ցուցադրուի Հայաստանի Ազգային պատկերասրահին մէջ: Այնուհետեւ ան պատկերացումները ինքնուրուի մարդարայատ», «Մուսա Լեւոն», «Արդարադատութիւն», «Տէր Զօր», «Կարօտ», «Տեսիլք» եւ Հայրենասիրական բնոյթի այլ կտաւներ, որոնք բոլորն ալ իրագործուած են խորհրդային շրջանին,



«Արայի լեռը վաղ գարնան» գործ՝ Ջուլում Գրիգորեանի:

Հայրենասիրութեամբ թաթառու այս ուշագրաւ արուեստագէտը ծնած է 1932ին, Կրասնոտար: 1957ին ան կ'աւարտէ Երեւանի Գեղարուեստաթատերական ինստիտուտը: 1957ին ան կ'աւարտէ Երեւանի Գեղարուեստաթատերական ինստիտուտը: 1957ին ան կ'աւարտէ Երեւանի Գեղարուեստաթատերական ինստիտուտը:

Ջուլում Գրիգորեանի պարագային նոյնիսկ բնանկարչութիւնը սերտորէն կ'առնչուի իր Հայրենասիրութեան: Արատաններու, եկեղեցիների եւ միջնադարեան այլ կոթողներու պատկերումները իրենց արտայայտչականութեամբ անմիջականութեամբը այդ կը վկայեն: Իսկ ընտելեան սէ'րը, այս մէկը եւս մակագրուած է Հայրենասիրութեամբ: Գիտեցէք անոր աշնան ու գարնան տեսարանները ու պիտի նշմարէք, թէ որքան քնքշանք, սէր ու միեւնոյն ատեն ակնածանք դրուած է անոնց մէջ: Անոր համար ընտելեանը, Հայրենի' ընտելեանն է, Հայրենի' երկիրը: Միջավայր մը, ուր ոչ միայն կ'ապրին ու կը ստեղծագործեն ինք ու իր ժողովուրդը, այլ նաեւ՝ «Մի փոքրիկ երկրում եսքան ստորութիւն չի կարելի», ինչպէս դառնորէն պիտի հառաչէր ան:

Այսպէս է Ջուլում Գրիգորեանը: Տաղանդաւոր արուեստագէտին մէջ նստած է նաեւ արուեստագէտի հանգամանքը: Միշտ հռուստ քաղաքական մարդակերպերէ՝ թէ՛ իրրեւ մարդ, թէ՛ իրրեւ հայ եւ թէ իրրեւ արուեստագէտ ան մնաց բարձր պատուանդանի վրայ, առանց դաւաճանելու իր ներքին ձայնին եւ ստեղծագործական մղումներուն:



«Աշուն» գործ՝ Ջուլում Գրիգորեանի:

ազգային աննպաստ պայմաններու մէջ:

Յիշեալ կտաւներուն անուանները միայն կը Բաւեն Ջուլում Գրիգորեանի նկատելու հայրենի մտնէն հայրենասէր, յանգուզն եւ յանձնառու գեղանկարիչներէն մէկը: Անոր կերտած հաւաքական կերպարները, հերոսներն ու համազօրումները կու գան խոր համագումներէ եւ կը բաշխուին ընդհանրական ու ջինջ Հայրենասիրութեան վրայ: Յատկանշական է նաեւ այն երեւոյթը, որ Ջուլում Գրիգորեան վերջին մէկուկէս տասնամեակին ընթացքին տեղի ունեցած Հայրենի քաղաքական եւեւեփումներու ընթացքին, երբեք չօգտագործեց անցեալի իր ազգային վարկն ու հայրենասէր - արուեստագէտի հանգամանքը: Միշտ հռուստ քաղաքական մարդակերպերէ՝ թէ՛ իրրեւ մարդ, թէ՛ իրրեւ հայ եւ թէ իրրեւ արուեստագէտ ան մնաց բարձր պատուանդանի վրայ, առանց դաւաճանելու իր ներքին ձայնին եւ ստեղծագործական մղումներուն:

«Վաստակաւոր նկարիչի պատուանդան» կոչումին արժանացած Ջուլում Գրիգորեանի գործերը, բացի նախկին խորհրդային երկիրներէն, ցուցադրուած են նաեւ Մ. Նահանգներու, Յրանսայի, Գերմանիոյ, Աւստրալիոյ, Չեխիոյ, Սլովակիոյ, Հունգարիոյ եւ այլ երկիրներու արուեստաբաններու մէջ:



«Վաղ գարուն» գործ՝ Ջուլում Գրիգորեանի:

Եւստի գանգաւ կեդրոններու մէջ: Իր ստեղծագործութիւններուն մէջ մեծ եւ հիմնական տեղ կը զբաղեն անոր բնանկարները:

տակերդոն, սակայն համարձակ, վատին հանդէպ այլամբօժ, սակայն զփայլանց մարդկայնական, Հայրենասիրական հանդէպ աններող, սակայն անկեղծ ու անաչառ արուեստագէտ մը: Անհանդարտ հոգիի ու համարձակ վրձնահարածներու տէր այս գեղանկարիչը ունի բնութագրուած իւր ինքնատուկ իւրաքանչիւր ստեղծագործութեան մէջ: Անոր ստեղծագործութեան արտայայտչականութեամբ անմիջականութեամբը այդ կը վկայեն: Իսկ ընտելեան սէ'րը, այս մէկը եւս մակագրուած է Հայրենասիրութեամբ: Գիտեցէք անոր աշնան ու գարնան տեսարանները ու պիտի նշմարէք, թէ որքան քնքշանք, սէր ու միեւնոյն ատեն ակնածանք դրուած է անոնց մէջ: Անոր համար ընտելեանը, Հայրենի' ընտելեանն է, Հայրենի' երկիրը: Միջավայր մը, ուր ոչ միայն կ'ապրին ու կը ստեղծագործեն ինք ու իր ժողովուրդը, այլ նաեւ՝ «Մի փոքրիկ երկրում եսքան ստորութիւն չի կարելի», ինչպէս դառնորէն պիտի հառաչէր ան:

Այսպէս է Ջուլում Գրիգորեանը: Տաղանդաւոր արուեստագէտին մէջ նստած է նաեւ արուեստագէտի հանգամանքը: Միշտ հռուստ քաղաքական մարդակերպերէ՝ թէ՛ իրրեւ մարդ, թէ՛ իրրեւ հայ եւ թէ իրրեւ արուեստագէտ ան մնաց բարձր պատուանդանի վրայ, առանց դաւաճանելու իր ներքին ձայնին եւ ստեղծագործական մղումներուն:



«Վաղ գարուն» գործ՝ Ջուլում Գրիգորեանի:

Եւստի գանգաւ կեդրոններու մէջ: Իր ստեղծագործութիւններուն մէջ մեծ եւ հիմնական տեղ կը զբաղեն անոր բնանկարները:

## ԳԱՔՐԻԷԼ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հայրենի արժանաւոր երիտասարդ գեղանկարիչներն է Գաբրիէլ Մանուկեան: Արուեստաբան Հենրիկ Իգիգեանի ստորագործութիւնը կրող եւ ստորեւ տրուած ակնարկը, ոչ միայն որոշ գաղափար մը կու տայ Գաբրիէլ Մանուկեանի ստեղծագործական կեանքին մասին, այլեւ անուղակիօրէն կը բացատրէ նաեւ անոր արուեստին գեղագիտական արժանիքներն ու բնոյթը:



«Տօնական երթ» գործ՝ Գաբրիէլ Մանուկեանի:

Երկրաչափութիւնից է յիշողութեան մէջ մնացել. «Իւրաքանչիւր ուղիղ կարծ է կորից»: Արուեստում ամենագոյնաւոր, բայց միակ արժանապատիւ ճանապարհը ստեղծագործականն է: Հաւասարապէս անընդունելի են ալ ու ձախ շեղումները: Անկախութիւնից առաջ մի մակուլատուրա (փնացած՝ տպագրութեան համար անպէտք թուղթ, որ կ'օգտագործուի իրրեւ փաթեթու թուղթ կամ կը վերամշակուի թուղթի գործարանին մէջ: - «Ա...») էր, այսօր՝ մի այլ: Փոխուել է հենքը, փոխուել են բեմայարդարումն ու գերակատարները, մոլախոտի էութիւնը նոյնն է: Հանրայայտ օրինաչափութիւն է՝ ամէն դարաշրջանի նշանաւոր մարդկանց մատենքի վրայ կարելի է հաշուել: Հայաստանում այսօր էլ մշակութի տարբեր ուղորտներում աշխատում է տաղանդաւոր երիտասարդների հետաքրքիր փաղանգ: Նրանց ստեղծարարական ապահովումը մեծապէս մասին անմաստ է խօսել: Նման բան պարզապէս չկայ: Մինչեւ անկախութիւնը միջոցները բաշխուած էին միջնադարեան ճափոնական եռաստիճան բաղնիքների համակարգով անդէմ դիւանականներին, ստեղծագործական միտքիւնների ղեկավարներին՝ լաւագոյնը, ճարպիկ պնակալէզներին, միջին դասակարգին՝ տէրուական սեղանի թերմացքը, վերջին աստիճանը մնացած պատանները իսկական արուեստագէտներին, որ յետոյ ճանաչուեցին ոչ միայն մեր երկրում, այլեւ՝ արտասահմանում: Միով բանիւ, բոլորին ինչ որ բան հասնում էր: Այսօր նկարիչը բախտի բաժանորդ է յանձնուած: Փայտը երկու ծայր ունի... Նոր սերնդի նկարիչներին կենսագրութիւնները հիմնականում նման են իրար: Նոյնը, բարեբախտաբար, չի կարելի ասել նրանց ստեղծագործութեան մասին: Ուսմանը յատկացուած ժամանակը, սովորարար համարում է նախապատրաստական, իր «վկայական ստանանք, տեսնեք», յետոյ գալիս են տխուր, տեւական, միապաղաղ, կաղապարներից ազատագրուելու երկարուծիք տարիներ, ապա միայն՝ սեփական «եսի» հաստատման ընթացքը: Գաբրիէլ Մանուկեանը շատ բան է փորձել: Ընդհուպ գերիբապաշտութիւն եւ վերացականութիւն, ինչը, անտարակոյս, մաքրագործել ու ազատագրել է նրա մտածողութիւնը անպէտք ու անարժէք պլալաքից: Նրա ստեղծագործութիւններում զգացում է ժամանակակից արուեստի նորագոյն միտումներին տեղեակ վերականգնողական գրագէտ մարդու ձեւագիրը:

Գաբրիէլի երեւակայութիւնը անվերջ է: Ապշեցընում է նրա անդադար ստեղծագործումի հրաբխային իւրայատկութիւնը: Հերթական փուլերի միջեւ դադարները կարճատեւ են եւ աւելի շուտ կապուած են նիւթի բացակայութեան եւ կենցաղային խնդիրների հետ: Առաջին իսկ հնարաւորութեան դէպքում նա ազատ է շախմատներ է անցնում, կարծես չէր էլ ընդմիջել: Շատ կարեւոր է ընդգծել, որ այդ դիւանական չի վերաճում նոյնատիպ վերարտադրութեան: Ընդհակառակը այն զգացողութիւնն է առաջանում, որ նա չի կարողանում կասեցնել իր սլացքը, կարծես ինչեւոր անտեսանելի, գերբնական գորութիւն կենսաուժ է ներարկում օգնելով ճեղքել գեղեցկութեան աստմները եւ շուրջընդհանուր զայտուցները:

